



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(67), 2015

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԾԱՌԵՐՆ ՈՒ ԹՓԵՐՆ

Ս.Գ. ՆԱՆԱԳՑՈՒԼՅԱՆ, Ա.Վ. ՊՈՂՈՍՅԱՆ,
Ռ.Գ. ԱՂԱՄՅԱՆ, Ա.Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական լսարան, բուսաբանության և սնկաբանության ամբիոն
astchik@ysu.am

Ուսումնասիրվել են ԵՊՀ-ի շրջակայքի ծառերի ու թփերի տեսակային կազմը: Արդյունքում գրանցվել են 72 տեսակ ծառեր ու թփեր, որոնք պատկանում են 55 ցեղերի և ընդգրկված են 33 ընտանիքներում: Տեսակների բազմազանությամբ և գեղագարությամբ աչքի են ընկնում կենտրոնական մասնաշենքին հարող կանաչ տարածքները, որտեղ կենտրոնացած են ծառերի ու թփերի տեսակների 63,9%-ը (46 տեսակ):

Ծառ – թուփ – տեսակ – կանաչապատում

Исследован видовой состав деревьев и кустарников, произрастающих на территории ЕГУ. В результате зафиксированы 72 вида деревьев и кустарников, относящихся к 55 родам и 33 семействам. Видовым разнообразием и красочностью выделяются зеленые насаждения перед центральным корпусом, где представлен 63,9 % (46 видов) из общего числа видов.

Дерево – кустарник – вид – озеленение

Trees and shrubs on the territory of YSU were studied. As a result, 72 species of trees and shrubs belonging to 55 genera and 33 families have been registered. Green territories surrounding the main building where 63,9% (46 species) of species of trees and shrubs are located, are distinguished by colorfulness and diversity of species.

Tree – shrubs – species – planting of greenery

Դեռևս պատմական Հայաստանի տարածքում, հողակլիմայական բազմազան պայմանների շնորհիվ, հնարավորություն է ստեղծվել ներմուծելու և աճեցնելու Երկրագնդի գրեթե բոլոր էկոաշխարհագրական տարածաշրջանների և բուսական աշխարհի տարբեր բաժինների ներկայացուցիչներ, որի նպատակն էր օտարածին գեղագարդ բուսատեսակների ներդրմամբ հարստացնել տարածքի բույսերի տեսակային կազմը:

Հնագույն ժամանակներից Արևմտյան Եվրոպայից և Ռուսաստանից Հայաստան են ներմուծվել գեղագարդ բույսերի բազմաթիվ տեսակներ, սակայն բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման ուղղությամբ նպատակաուղղված աշխատանքներ կատարվել են հիմնականում 20-րդ դարում՝ բուսաբանական այգիների և դենդրոպարկերի, մասնավորապես 1935թ. Երևանի Բուսաբանական այգու ստեղծմամբ:

Գերբնակեցված քաղաքների, արդյունաբերական շրջանների կանաչ տարածքների ծառերի ու թփերի բազմաբնույթ արժեքներից կարևորվում է էկոլոգիական նշանակությունը, քանի որ կանաչ տնկարկները հանդիսանում են քաղաքների էկոլոգիական պայմանները բարելավող հզոր գործոն (ունեն ծխա-, փոշե- և աղմկապաշտպան հատկություններ) [1, 2, 4, 6, 7]:

Ուստի շատ քաղաքներում, այդ թվում և Երևանում, ստեղծվել են զբոսայգիներ տեղի միկրոկլիմայական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման համար: Ներկայումս քաղաքների կանաչապատման նախագծերը կազմելիս աշխատում են քաղաքի ամենախիտ բնակեցված շրջանները կանաչապատել այնպիսի տեսակներով, որոնք աչքի են ընկնում ոչ միայն գեղազարդությամբ, այլև ֆիտոնցիդներ արտադրելու մեծ ունակությամբ: Այդպիսի տեսակները հատկապես անհրաժեշտ են ուսումնական հաստատությունների, մանկապարտեզների, հիվանդանոցների բակերի կանաչապատման համար [3; 5; 8]:

Երևանի պետական համալսարանի տարածքի կանաչապատման աշխատանքները սկսվել են դեռևս 1954 թ.: Հիմնական ծառերն են եղել թեղի (*Ulmus*), կաղնի (*Quercus*), բարդի (*Populus*), ձիակասկենի (*Aesculus*) ցեղերի տեսակները: Տարեց տարի դրանց թիվը մեծացել է: Այսօր էլ շարունակվում են ծառատնկումները: Հաստաբուն ծառերի կողքին հանդիպում են նորատունկ ծառերի ու թփերի, ինչպես նաև երիտասարդ ծառերի, որոնք բնական վերաճի արդյունք են: Դրանցից են բարդին, կաղնին, կելրեյթերիան (*Koelreuteria*), թեղին:

Հաշվի առնելով այն, որ վերջին տարիներին կանաչապատման աշխատանքների արդյունքում ավելացել է տնկիների քանակը, իսկ կարգաբանական աշխատանքներ երբևիցե չեն կատարվել, մենք նպատակահարմար գտանք ուսումնասիրել Երևանի պետական համալսարանի տարածքում աճող ծառերի ու թփերի տեսակային կազմը:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նյութ են հանդիսացել ԵՊՀ-ի շրջակայքից մեր կողմից հավաքված ծառերի և թփերի նմուշները: Հավաքված նյութը մշակելուց և հերքարիում պատրաստելուց հետո խմբավորել ենք բույսերն ըստ տեսակային կազմի, կազմել բույսերի կարգաբանական ցուցակը և կատարել տաքսոնոմիական վերլուծություն: Երևանի պետական համալսարանի տարածքում աճող ծառերի ու թփերի տեսակները որոշելու համար օգտվել ենք բազմաթիվ մենագրություններից [4, 5], որոշիչներից [9, 10], գրքերից [1, 2, 11, 12] և այլն:

Արդյունքներ և քննարկում: Երևանի պետական համալսարանի տարածքում մեր հետազոտությունների ընթացքում գրանցվել են ծառերի ու թփերի 72 տեսակ, որոնք պատկանում են 55 ցեղերի և ընդգրկված են 33 ընտանիքներում:

Նշված 72 տեսակներից 8-ը (5 ընտանիք, 6 ցեղ) պատկանում են Մերկասերմերի բաժնին, իսկ մնացած 64-ը՝ Ծածկասերմերին (աղ. 1): Աղ. 1-ում ընտանիքները, ցեղերը և տեսակները բերված են ըստ այբբենական կարգի:

Աղյուսակ 1. Երևանի պետական համալսարանի տարածքից հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակ

Ընտանիք	Ցեղ	Տեսակ
Pinophyta (Gymnospermae) Cupressaceae- Նոճազգիներ	<i>Chamaecyparis</i> - Գետնանոճի	<i>C. lawsoniana</i> (A. Murray) Parl.- Գ. լավսոնի
	<i>Juniperus</i> -Գիհի	<i>J. sabina f. cupressifolia</i> Ait.-Գ. կազակական <i>J. virginiana</i> L.-Գ. վիրգինյան
	<i>Thuja</i> -Թույա	<i>T. occidentalis</i> L.-Թ. արևմտյան <i>T. orientalis</i> (L.) Endl.-Թ. արևելյան
	<i>Ginkgo</i> - Գինկո	<i>G. biloba</i> L.- Գ. երկլորթակ
Ginkgoaceae- Գինկոզգիներ		
Pinaceae- Սոճազգիներ	<i>Picea</i> -Եղևնի	<i>P. pungens f. glauca</i> Beissn.-Ե. կեռիկավոր արծաթազույն
Taxodiaceae- Գետնանոճազգիներ	<i>Metasequoia</i> - Մետասեքվոյա	<i>M. glyptostrobooides</i> Hu et Cheng- Մ. գլիպտոստրոբոիդային
Magnoliophyta (Angiospermae) Aceraceae- Թխկազգիներ	<i>Acer</i> - Թխկի	<i>A. campestre</i> L.-Թ. դաշտային <i>A. negundo</i> L.-Թ. հացենիատերև <i>A. pseudoplatanus</i> L.-Թ. կեղծսոսիատերև, սպիտակ
Anacardiaceae- Աղտորազգիներ	<i>Cotinus</i> -Դրախտաձառ	<i>C. coggygia</i> Scop.-Դ. սովորական
Berberidaceae- Օրբենազգիներ	<i>Berberis</i> -Օրբենի	<i>B. vulgaris</i> L.- Օ. սովորական
Betulaceae- Կեչազգիներ	<i>Betula</i> - Կեչի	<i>B. litwinowii</i> Doluch.- Կ. լիտվինովի <i>B. pendula</i> Roth.- Կ. ելունդավոր


Bignoniaceae- Բիգնոնիազգիներ	<i>Catalpa</i> -Կատալպա	<i>C. ovata</i> G. Don - Կ. օվալատերև
Buxaceae- Տնսախազգիներ	<i>Buxus</i> -Տոսախ	<i>B. sempervirens</i> L.- Տ. մշտադալար
Caprifoliaceae- Ցախակեռասազգիներ	<i>Lonicera</i> -Ցախակեռաս	<i>L. tatarica</i> L.-Ց. թաթարական
		<i>L. sp.</i>
	<i>Sambucus</i> -Կտակենի	<i>S. sp.</i>
	<i>Viburnum</i> -Բոնչի	<i>V. opulus</i> L.-Բ. սովորական
Cornaceae- Հոնազգիներ	<i>Swida</i> -Հապկի	<i>S. australis</i> (C.A.Mey.) Pojark.-Ճ. հարավային
Elaeagnaceae- Փշատազգիներ	<i>Elaeagnus</i> -Փշատենի	<i>E. angustifolia</i> L.-Փ. նեղատերև
Fabaceae- Բակլազգիներ	<i>Albizzia</i> -Ալբիցիա	<i>A. julibrissin</i> Durazz.-Ա. լենթրանյան (մետաքսափայլ ակացիա)
	<i>Cercis</i> - Հուդայի ծառ	<i>C. siliquastrum</i> L.-Հուդայի ծառ
	<i>Gleditschia</i> - Գլեդիչիա	<i>G. triacanthos</i> L.-Գ. սովորական
	<i>Sophora</i> -Սոֆորա	<i>S. japonica</i> L.-Ս. ճապոնական
Fagaceae- Հաճարազգիներ	<i>Quercus</i> -Կաղնի	<i>Q. robur</i> L.-Կ. ամառային
		<i>Q. sp.</i>
Grossulariaceae- Կոկոռազգիներ	<i>Grossularia</i> -Կոկոռչենի	<i>G. sp.</i>
Hippocastanaceae- Չիակասկազգիներ	<i>Aesculus</i> -Չիակասկ	<i>A. hippocastanum</i> L.-Չ. սովորական
Hydrangeaceae- Դրախտավարդազգիներ	<i>Philadelphus</i> -Սրնգենի	<i>P. caucasicus</i> Koehna-Ս. կովկասյան
Juglandaceae- Ընկուզազգիներ	<i>Juglans</i> -Ընկուզենի	<i>J. regia</i> L.-Ը. հունական
Loganiaceae- Լոգանիազգիներ	Buddleia-Բուդլեյա	<i>B. davidii</i> Franch.-Բ. դավիդի
Malvaceae- Տուլտազգիներ	Hibiscus-Բադրջուկ	<i>H. syriacus</i> L.-Բ. սիրիական
Moraceae – Թթազգիներ	<i>Ficus</i> - Թզենի	<i>F. carica</i> L.-Թ. սովորական
	<i>Morus</i> - Թթենի	<i>M. alba</i> L.-Թ. սպիտակ
		<i>M. alba f. pendula</i> Dipp.-Թ. սպիտակ, լացող
		<i>M. nigra</i> L.-Թ. սև
Oleaceae- Չիթենազգիներ	<i>Forsythia</i> -Ֆորսիցիա	<i>F. intermedia</i> Zab.-Ֆ. միջանկյալ
	<i>Fraxinus</i> -Հացենի	<i>F. oxycarpa</i> Willd.-Հ. սրապտուղ
		<i>F. sp.</i>
	<i>Ligustrum</i> -Կիպրոս	<i>L. sp.</i>
	<i>Syringa</i> -Եղևանի	<i>S. vulgaris</i> L.-Ե. սովորական
Platanaceae- Մոսազգիներ	<i>Platanus</i> -Մոսի	<i>P. acerifolia</i> Willd.-Մ. թխկիատերև
		<i>P. orientalis</i> L.-Մ. արևելյան
Rosaceae- Վարդազգիներ	<i>Armeniaca</i> -Օժիտենի	<i>Armeniaca vulgaris</i> Lam.-Օ. սովորական
	<i>Cerasus</i> -Կեռասենի	<i>Cerasus avium</i> (L.) Moench- Կեռասենի
		<i>C. vulgaris</i> Mill.-Բալենի սովորական
	<i>Crataegus</i> -Սզնի	<i>C. sp.</i>
	<i>Cydonia</i> -Սերկևիլենի	<i>C. oblonga</i> Mill.-Ս. սովորական
	<i>Malus</i> -Խնձորենի	<i>M. domestica</i> Borkh.-Խ. կուլտուրական
	<i>Prunus</i> - Սալորենի	<i>P. divaricata</i> Ledeb.-Ս. չոված, շյորենի
	<i>Pyrus</i> -Տանձենի	<i>P. sp.</i>
	<i>Rosa</i> -Մասրենի	<i>R. sp.</i>
	<i>Rosa</i> -Վարդենի	<i>R. sp.</i>
	<i>Spiraea</i> -Ասպիրակ	<i>S. x vanhouttei</i> (Briot) Zab.- Ա. վանհուտտի
Salicaceae- Ուռազգիներ	<i>Populus</i> -Բարդի	<i>P. bolleana</i> Lauche-Բ. բոլլե
		<i>P. deltoides</i> Marsh.-Բ. կանադական
		<i>P. gracilis</i> Grossh.-Բ. նրբագեղ
		<i>P. nigra</i> L.-Բ. սև
	<i>Salix</i> -Ուռենի	<i>S. alba f. pendula</i> Hort.-Ու. սպիտակ լացող
		<i>S. babylonica</i> L.-Ու. բաբելոնյան
Sapindaceae- Օճառազգիներ	<i>Koelreuteria</i> -Կելրեյթերիա	<i>K. paniculata</i> Laxm.-Կ. հուրանավոր
Simaroubaceae- Սիմարուզազգիներ	<i>Ailanthus</i> -Այլանթ (երկնածառ)	<i>A. altissima</i> (Mill.) Swingle-Ա. բարձրավուն
Solanaceae- Մորմազգիներ	<i>Lycium</i> -Հազագ	<i>L. barbarum</i> L.-Հ. բերբերի
Tamaricaceae- Կարմրանազգիներ	<i>Tamarix</i> -Կարմրան	<i>T. ramosissima</i> Ledeb.-Կ. բազմաճյուղ
Tiliaceae- Լորենազգիներ	<i>Tilia</i> - Լորենի	<i>T. sp.</i>

Ulmaceae-Թեղազգիներ	<i>Ulmus</i> -Թեղի	<i>U. carpinifolia (minor)</i> Rupp. ex Suckow- Թ. բոխատերև
		<i>U. glabra</i> Huds.- Թ. խորդուբորդ
Vitaceae- Խաղողազգիներ	<i>Vitis vinifera</i> L.-Խաղող	<i>V. vinifera</i> L.-Խ. սովորական
	<i>Parthenocissus</i> - Կուսախաղող	<i>P. quinquefolia</i> (L.) Planch-Կ. հնգատերև

Աղյուսակ 2. Երևանի պետական համալսարանի տարածքիցում աճող բույսերի ցեղերի և տեսակների քանակական կազմը

Ընտանիք	Ցեղ	Տեսակ
Aceraceae	1	3
Anacardiaceae	1	1
Berberidaceae	1	1
Betulaceae	1	2
Bignoniaceae	1	1
Buxaceae	1	1
Caprifoliaceae	3	4
Cornaceae	1	1
Cupressaceae	3	5
Elaeagnaceae	1	1
Fabaceae	4	4
Fagaceae	1	2
Ginkgoaceae	1	1
Grossulariaceae	1	1
Hippocastanaceae	1	1
Hydrangeaceae	1	1
Juglandaceae	1	1
Loganiaceae	1	1
Malvaceae	1	1
Moraceae	2	4
Oleaceae	4	5
Pinaceae	1	1
Platanaceae	1	2
Rosaceae	10	11
Salicaceae	2	6
Sapindaceae	1	1
Simaroubaceae	1	1
Solanaceae	1	1
Tamaricaceae	1	1
Taxodiaceae	1	1
Tiliaceae	1	1
Ulmaceae	1	2
Vitaceae	2	2
33	55	72


Տեսակների թվով առաջատար են Rosaceae (11 տեսակ), Salicaceae (6 տեսակ), Cupressaceae, Oleaceae (5-ական տեսակ), Caprifoliaceae, Fabaceae, Moraceae (4-ական տեսակ), Aceraceae (3 տեսակ) ընտանիքները (նկ. 1): 5 ընտանիք (Betulaceae, Fagaceae, Platanaceae, Ulmaceae, Vitaceae) ներկայացված են երկուական, 20 ընտանիք՝ մեկական տեսակներով (աղ. 2):



Նկ. 1. ԵՊՀ-ի տարածքից հայտնաբերված բույսերի ընտանիքների բաշխումն ըստ տեսակների

Ընտանիքները ցեղերի քանակով դասավորվում են հետևյալ կերպ. Rosaceae ընտանիքը՝ 10 ցեղ, Fabaceae, Oleaceae՝ 4-ական, Caprifoliaceae, Cupressaceae՝ 3-ական: Moraceae, Salicaceae, Vitaceae ընտանիքները ներկայացված են երկուական ցեղերով (նկ. 2) և 25 ընտանիք՝ մեկական ցեղով (աղ. 2):

ԵՊՀ-ի տարածքից հավաքված բույսերի առաջատար ընտանիքներին պատկանում է 42 տեսակ, որը կազմում է ամբողջ տեսակների 58,3%-ը:



Նկ. 2. ԵՊՀ-ի տարածքից հայտնաբերված բույսերի ընտանիքների բաշխումն ըստ ցեղերի

Տեսակների բազմազանությամբ աչքի է ընկնում կենտրոնական մասնաշենքին հարող կանաչ տարածքը, որտեղ կենտրոնացած է ուսումնասիրվող տարածքի ծառերի ու թփերի 63,9%-ը (46 տեսակ):

Այս տարածքի աջ հատվածում՝ դեպի 4-րդ մասնաշենք (ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներ), որպես ցանկապատ աճում են ֆորգիցիան, իսկ Ալեք Մանուկյան փողոցի կողմից՝ ասպիրակը: Դոմինանտ են բարդիները, կաղնիները, թխկիները, ձիակասկենիները: Կան նաև թույա, հուդայի ծառ, մե-տաքսափայլ ակացիա, դրախտածառ, ասպիրակ, կելրեյթերիա, նորատունկ ձիակաս-կենիներ, որոնք գտնվում են ֆորգիցիաներով ցանկապատի հետին մասում, թթենի, եղրևանի, ճապկի, լացող ուռենի, լորենի, թեղի: Վերջին երկուսը վարակված են վնասատուներով:

Կենտրոնական մասնաշենքի և 3-րդ մասնաշենքի (ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, սոցիոլոգիայի ֆակուլտետներ) հատվածում կան կաղնիներ, թխկիներ, բարդիներ, խոշոր ձիակասկենիներ, ասպիրակ, բուդլեյա, բոնչի: Պտղատուներից՝ ծիրանենի, շլորենի, սերկևիլենի: Այստեղ նկատվում է կաղնու, բարդու, թեղու բնական վերած: Պատերի տակ աճում են փոքրիկ այլանթներ: Կենտրոնական մասնաշենքի կենտրոնական մասում կան լացող ուռենիներ, վարդենիներ, ձախ հատվածում՝ դեպի 1-ին մասնաշենք (քիմիայի, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետներ), որպես ցանկապատ աճում է ասպիրակը: Դոմինանտ տեսակներն են երիտասարդ և հասուն բարդիները, կելրեյթերիաները: Կան մետասեքվոյա, կեչի, ֆորգիցիա, նորատունկ եղրևանի, խաղող, ձիակասկենի, արծաթափայլ եղնի, թույայի, ուռենու երկու տեսակ, հուդայի ծառ, կարմրան, հսկա կաղնի, ցախակեռաս, բադրջուկ, ճապկի, հազագ, կոկոռշենի, դեպի Ալեք Մանուկյան փողոց որպես երկրորդ ցանկապատ ֆորգիցիաներն են: Այստեղ վերած են տվել բարդին, կելրեյթերին:

2-րդ մասնաշենքի (իրավագիտության, միջազգային հարաբերությունների ֆակուլտետներ) և կենտրոնական մասնաշենքի հատվածում որպես ցանկապատ ծառայում են արնգենին և ֆորգիցիան: Գերակշռում են նորատունկ և խոշոր բարդիները, կել-րեյթերիաները, ձիակասկենիները: Կան թխկի, նորատունկ թթենի, բուդլեյա, դրախտա-ծառ, մետասեքվոյա, ուռենի, ընկուզենի, հուդայի ծառ, խնձորենի: Կենտրոնական մասնաշենքին հարող կանաչ տարածքներում հանդիպում ենք կաղնու, բարդու, կելրեյթերիայի, թեղու բնական վերած:

Չարենցի փողոցի վրա հանդիպում են թույա, սոֆորա, կատալպա, ֆորգիցիա, ցախակեռաս և այլ բույսեր, գերակշռում են՝ հացենիները, գիհիները:

5-րդ մասնաշենքի (կենսաբանության ֆակուլտետ) բակի կողմից աճում են կտտկենի, թեղի, շլորենի, ցախակեռաս, թխկի, ընկուզենի, սոֆորա: Այս տարածքում գերակշռում է ցախակեռասը:

Կենսաբանության ֆակուլտետի հետնամասում կան սոսի, թեղի, ասպիրակ, ցախակեռաս և այլն: Որպես ցանկապատ ճապկին է: Ջերմոցին կից աճում են զլեդիչիան, թեղին:

7-րդ մասնաշենքի (արևելագիտության, ռումանագերմանական բանասիրության, ժուռնալիստիկայի, ռուս բանասիրության ֆակուլտետներ) տարածքում որպես ցանկապատ ծառայում է ցախակեռասը, դոմինանտ ցեղերն են ընկուզենին, բարդին, հանդիպում են տոսախ (սամշիտ), այլանթ, թթենի, կեռասենի, բալենի, զլեդիչիա և այլն:

2-րդ մասնաշենքի դիմաց կան բարդիներ, գիհիներ:

Գրադարանի մասնաշենքի դիմաց դեպի կենսաբանության ֆակուլտետ գերակշռում են թեղիները, բարդիները, սոսիները, որպես ցանկապատ՝ նորաստուն թույլաներ: Կան կաղնիներ, ֆորգիցիաներ, ասպիրակներ, մետաքսափայլ ակացիա, թխկիներ, հացենիներ, գետնանոճիներ, նորաստուն ձիակասկենիներ, ծորենիներ և այլն: Դեպի Կիրառական ֆակուլտետ հանդիպում են թեղիներ, կելրեյթերիաներ, կաղնիներ, ֆորգիցիաներ, ասպիրակներ, բարդիներ, սոֆորա, ցախակեռասներ և այլն: Գրադարանի կողքի հատվածում, դեպի Կիրառական ֆակուլտետ՝ ձիակասկենի, բաղրջուկ, ասպիրակ, հացենի, բարդիներ, եղրնանի, թեղի, այլանթ, թթենի, ծիրանենի, շենքի պատերի մոտ՝ այլանթներ: Ցանկալի կլինեն, որ այլանթները գտնվեն մշտական հսկողության տակ: Հակառակ դեպքում, վերջիններս, շատ լավ հարմարված լինելով Երևանի կլիմայական պայմաններին, դուրս կմղեն մյուս ծառատեսակներին:

10-րդ մասնաշենքի (ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն) տարածքում հանդիպում են կուսախաղող, մասրենի, սգնի, վարդենի, խաղող, տանձենի և այլն:

ԵՊՀ-ի ողջ տարածքին բնորոշ են բարդին, թեղին, ձիակասկենին, թթենին, հացենին, թխկին, ֆորգիցիան, ասպիրակը, ցախակեռասը: Ցավոք նկատեցինք, որ ողջ տարածքում սոճու ոչ մի առանձնյակ չկա: Համալսարանի տարածքում աճում են ռելիկտային բույսերից մետասեքվոյան և գինկգոն: Երկուսն էլ աճեցվում են Երևանի պայմաններում, սակայն ավելի դիմացկուն են հանրապետության ցածրադիր և համեմատաբար խոնավ շրջաններում [1]:

Եզրակացություններ և առաջարկություններ: Ամփոփելով ուսումնասիրությունների արդյունքները պարզվեց, որ ընդհանուր առմամբ Երևանի պետական համալսարանի տարածքը հարուստ է ծառերի և թփերի տեսակներով՝ 72 տեսակ, որոնք պատկանում են 55 ցեղի և 33 ընտանիքի: Գերակշռող վարդագգիների (Rosaceae) ընտանիքն է՝ 10 ցեղ և 11 տեսակ: Զիթենագգիները (Oleaceae) ներկայացված են 4 ցեղով և 5 տեսակով, բակլագգիները (Fabaceae)՝ 4 ցեղով և 4 տեսակով, նոճագգիները (Cupressaceae)՝ 3 ցեղով և 5 տեսակով, ցախակեռասագգիները (Caprifoliaceae)՝ 3 ցեղով և 4 տեսակով, ուռենագգիները (Salicaceae)՝ 2 ցեղով և 6 տեսակով, թթագգիները (Moraceae)՝ 2 ցեղով և 4 տեսակով, խաղողագգիները (Vitaceae)՝ 2 ցեղով և 2 տեսակով, թխկագգիները (Aceraceae)՝ 1 ցեղով և 3 տեսակով, կեչագգիները (Betulaceae), հաճարագգիները (Fagaceae), սոսագգիները (Platanaceae) և թեղագգիները (Ulmaceae)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած 20 ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով (աղ. 2):

Հայաստանի բուսաբանական այգիներում փորձարկված և կլիմայավարժեցված ծառաբույսերի, դրանց պարտիզային ձևերի վիճակի և հեռանկարայնության գնահատման հիման վրա [5] կատարվել է դրանց խմբավորում և տրվել են առաջարկություններ կանաչապատման մեջ հետագա նպատակային օգտագործման վերաբերյալ:

Առավել հեռանկարային են համարվում՝ *Juniperus communis*, *Thuja occidentalis* իր բազմաթիվ պարտիզանային ձևերով, *Acer platanoides*, *A. pseudoplatanus*, *Berberis vulgaris* f. *atropurpureus*, *Catalpa ovata*, *Sophora japonica*, *Quercus robur*, *Aesculus hippocastanum*, *Philadelphus caucasicus*, *Hibiscus syriacus*, *Syringa vulgaris*, *Platanus orientalis* տեսակները և *Spiraea*, *Fraxinus*, *Populus*, *Salix* ցեղերի ներկայացուցիչները:

Բույսերի ամենակարևոր դեկորատիվ առանձնահատկություններից մեկը դրանց բուրմունք արձակելու ընդունակությունն է: Դա հատկապես կարևոր է ժամանակակից քաղաքների պայմաններում, որտեղ գերակշռում են ծուխը, փոշին, զանազան գազերից

առաջացած զարշահոտությունները: ԵՊՀ-ի շրջակայքում ծաղկման շրջանում հաճելի բուրմունք են արձակում լորենին, ռոբինիա կեղծակացիան, կիպրոսը, եղրևանին, փշատենին, վարդի որոշ տեսակներ ու սորտեր և այլն:

Սակայն կան նաև բույսեր, որոնց բուրմունքը տհաճ է և վանող: Այդպիսի բույսերից է երկնածառը, որի հոտը վանում է անգամ միջատներին [3]:

Ելնելով վերը նշվածից, գտնում ենք, որպեսզի ԵՊՀ-ի տարածքը լինի անընդմեջ ծաղկող և գեղագարդ, ծառերի ու թփերի տեսակային կազմը ցանկալի է հարստացնել մշտադալար տեսակներով (հատկապես սոճիով), վիստերայով, մագլցող վարդերով, կամպսիսով, ռոբինիա կեղծակացիայով, ձնապտղիկով, մամրիչով, ճապոնական սեր-կնիլենիով: Նախընտրելի է նաև, որպես գեղագարդ բույսեր, համալսարանի ողջ տարածքում տնկել հուդայածառ, մետաքսափայլ ակացիա, սոֆորա, դրախտածառ, բադրջուկ, եղրևանի, կոտկենի, բոնչի և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Լ. Վ., Հարությունյան Ս.Լ.* Հայաստանի դենդրոֆլորան: Գիտահանրամատչելի ակնարկ, Երևան, առաջին մաս, 440 էջ, 1985:
2. *Հարությունյան Լ. Վ., Հարությունյան Ս.Լ.* Հայաստանի դենդրոֆլորան: Գիտահանրամատչելի ակնարկ, Երևան, երկրորդ մաս, 464 էջ, 1987:
3. *Հարությունյան Լ. Վ.* Հետաքրքրաշարժ բուսաբանություն: Հայբուսակ հրատ. 400 էջ, 2003:
4. *Վարդանյան Շ.Հ.* Օառագիտություն: Երևան, ՀԳԱ, 370 էջ, 2005:
5. *Варданян Ж.А.* Научные основы интродукции древесных растений в Армении. Ереван, изд. "Гитутюн" НАН РА, 400с., 2012.
6. *Кочарян К.С.* Эколого-экспериментальные основы зеленого строительства в крупных городах центральной части России (на примере города Москвы). М., Наука, 184с, 2000.
7. *Осипян Л.Л., Саркисян К.М.* История озеленения г. Еревана. Биолог. Журн. Армении, LVI, 3-4, с. 285-293, 2004.
8. *Саркисян К.Ш.* Зеленое кольцо Еревана. История создания и пути восстановления, Ереван, "Асогик", 160 с., 2007.
9. *Тахтаджян А.Л., Федоров А.А.* Флора Еревана. Ленинград, 394 с., 1972.
10. *Флора Армении. Определитель.* Под редакцией Тахтаджяна А.Л. тт. I-XI, 1954-2010.
11. *Черепанов С.К.* Сосудистые растения СССР. Ленинград, 509 с., 1981.
12. *Gabrielian E., Fragman-Sapir O.* Flowers of the Transcaucasus and Adjacent Areas. Germany, 416 p., 2008.

Ստացվել է 20.10.2014